“ԵՐԵՎԱՆԻ Լ.ԵՈՅԻ ԱՆՎԱՆ N 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ”

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍԱՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ երաժշտություն

Մասնակից՝ Երևանի Ա. Պուշկինի անվ. հ. 8

հիմնական դպրոցի ուսուցիչ՝ Մկրտչյան Ժաննա

Ղեկավար՝ Խրիմյան Հռիփսիմե

Թեմա՝ ՏՀՏ միջոցների դերը, որպես Երաժշտություն առարկայի դասավանդման միջոց:

2022 թ.

Ներածություն

Երաժշտությունը, ինչպես մայրենի լեզուն, ազգի ինքնությունը, ինքնագիտակցությունն ու գոյությունը պահպանող միջոց է:

«Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասավանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է: Այն կրթության և դաստիարակության բնագավառի կարևոր բաղադրամասերից մեկն է, առանց որի թերի կլինի ժամանակակից մարդու մտավոր և հոգևոր զարգացումը:

Երաժշտական դաստիարակությունը նպաստում է ոչ միայն անհատի ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանն ու դրսևորմանը, այլև անցյալի գեղարվեստական փորձի, ազգային ու համամարդկային մշակութային արժեքների յուրացմանն ու հաջորդ սերնդին փոխանցմանը: Երաժշտությունը սովորողների մեջ արմատավորում է մարդկային լավագույն հատկանիշներ, մարդասիրական զգացումներ, բարոյահոգեբանական նկարագիր, գեղագիտական աշխարհայացք, ազգային արժանապատվության խորը գիտակցում և հայրենասիրություն:

Մեծ է նաև երաժշտության դաստիարակչական ու ճանաչողական նշանակությունը սովորողների աշխարհայացքային և արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում: Երաժշտությունը պարունակում է հսկայական կրթադաստիարակչական ներուժ՝ միջառարկայական կապեր ստեղծելով արվեստների և ֆիզիկական դաստիարակության, հումանիտար և բնագիտական առարկաների միջև: Երաժշտությունը, մյուս առարկաներին հուզազգացմունքային լիցք հաղորդելով, նպաստում է սովորողների կարողությունների ակտիվացմանը, մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանը և զարգացմանը:

ՏՀՏ միջոցների դերը. որպես Երաժշտություն առարկայի դասավանդման միջոց:

ՏՀՏ-ների կիրառումը հատկապես արդյունավետ է դառնում միջին դպրոցում, որտեղ դրսևորվում և կարևորվում է սովորողների հետազոտելու և ինքնուրույն աշխատելու ձգտումը: Եթե տարրական դպրոցի սովորողի մոտ ուժեղ է երաժշտության ընկալման զգայական, հուզական կողմը (նա նկարագրում է միայն իր զգացողությունները և տպավորությունները), ապա միջին դպրոցում զգայականին ավելանում է նաև գիտակցականը: Զգայական, պատկերային մտածողությունից սովորողն անցնում է իմացական հասկացություններին, որոնք կազմավորում են երաժշտական մտքի խորությունը, գիտակցությունը, ձևավորում ու զարգացնում են երեխայի ստեղծագործական երևակայությունը: Երաժշտության նման ընկալումից և վերապրումից հետո սովորողի միտքը կատարում է վերլուծական, համադրական և իմաստավորման աշխատանքներ, որի արդյունքում նրա մեջ առաջանում է երաժշտություն լսելու պահանջմունք, մեծանում են նրա հետաքրքրության շրջանակները: Երաժշտության դասերին սովորողները ստանում են հոգևոր սնունդ, դաստիարակություն, զարգանում է նրանց գեղագիտական ճաշակը: Շփվելով արվեստի բարձրարժեք ստեղծագործություններին՝ ձևավորվում և զարգանում է նաև նրանց արժեքային համակարգը, որով և իրականացվում է առարկայի չափորոշչային պահանջների կատարումը ժամանակակից թվային տեխնոլոգիաների միջոցով:

Երաժշտական գործունեության տեսակները՝ երգեցողությունը, երաժշտության ունկնդրումը, երաժշտառիթմական շարժումը, նվագը և իմպրովիզացիան լայն հնարավորություններ ունեն ձևավորելու և զարգացնելու սովորողների ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունները և հմտությունները: Երաժշտական դաստիարա-

կությունը սերտ կապի մեջ է գիտատեխնիկական ու սոցիալական առաջընթացի, կրթության աճող պահանջների հետ: Բնական է, որ առանց մանկավարժական տեխնոլոգիաների փոփոխության, առարկայի դասավանդման բովանդակային վերակառուցման, ինչպես նաև ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման հնարավոր չէ ինտեգրվել արդի կրթական համակարգին, հնարավոր չէ կազմակերպել սովորողների երաժշտական դաստիարակության գործընթացը:

Երեխաների երաժշտական զարգացումը, դաստիարակությունը խիստ կապի մեջ են նրանց տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների հետ: Հաշվի առնելով երեխաների՝ երաժշտության ընկալման ակտիվությունը և հետաքրքրությունների լայն շրջանակը, անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել տարրական դասարանցիների երաժշտական դաստիարակության վրա, այլապես դժվար կլինի կազմակերպել միջին դասարանցիների երաժշտական դաստիարակության գործընթացը:

5-7-րդ դասարաններում տեղի է ունենում սովորողների թե՛ մտավոր ու հոգևոր, և թե՛ ֆիզիկական ու գեղագիտական բուռն զարգացում՝ կապված այդ դասարանցիների տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այս շրջանում ավելի է ընդլայնվում մտահորիզոնը, ակտիվանում երևակայությունը, երաժշտական ստեղծագործական և վերլուծական մտածողությունը, գիտելիքների, կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի զարգացման շրջանակները, երաժշտության նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը, գիտակցական վերաբերմունքը, սիրո զգացմունքը, մասնավորապես, սեր՝ հանդեպ մարդը, շրջապատը, բնությունը, հայրենիքը և այլն:

Այս ամենը հնարավորություն են տալիս 5-7-րդ դասարանցիներին մարդկային փոխհարաբերություններում, շրջապատում ճիշտ կողմնորոշվելու, գեղեցիկը զգալու, լինելու ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, բարեկիրթ, հայրենասեր:

Եթե հաշվի առնենք նաև, որ ներկայումս մեծացել է տարբեր ազգերի մշակութային կապերի դաշտը, մարդկային փոխհարաբերությունների շրջանակը, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման ու դաստիարակության գործընթացում, պարզ է դառնում, որ երաժշտությունը մեծ հնարավորություններ ունի մարդ-անհատի դաստիարակության ու զարգացման գործում:

Չափորոշիչը մշակելիս հաշվի է առնվել երեխաների երաժշտական դաստիարակության բնագավառում համաշխարհային առաջավոր փորձը:

Այսպես, օրինակ, կոմպոզիտոր-մանկավարժներ Դմիտրի Կաբալևսկու /Ռուսաստան/ ուսուցման թեմատիկ կառուցվածքը, որտեղ նյութը համախմբվում է մի հիմնական թեմայի շուրջ և ուսուցման ընթացքը դասից դաս նվիրվում է տվյալ թեմայի բազմակողմանի բացահայտմանը, Զոլտան Կոդայի /Հունգարիա/ մանկա-վարժական բեղուն ավանդույթները, որոնք հենվում են ժողովրդական երաժշտության նմուշների և արդյունավետ մեթոդների լայն կիրառման վրա, Էմիլ Ժակ-Դալկրոզի /Շվեյցարիա/ կիրառած երաժշտառիթմական շարժումն իբրև երաժշտական ընդունակությունների և մարմնի շարժումների զարգացման միջոց, Կարլ Օրֆի /Ավստրիա/ առաջարկած՝ երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացման և մանկական նվագարաններով նվագելու պրակտիկան և այլն:

Ավելորդ չենք համարում ասել, որ դեռ 20-րդ դարասկզբին երեխաների երաժշտական դաստիարակության բնագավառում նման մոտեցումներ են հանդես բերել նաև հայ մանկավարժ - կոմպոզիտորներ Կոմիտասը, Սպիրիդոն և Ռոմանոս Մելիքյանները և այլոք:

Այսպիսով, ուսուցման ու դաստիարակության բովանդակության մեջ առաջին հերթին արտացոլում են գտնում երաժշտության մասին ընդհանրացված, հանգուցային գիտելիքները, որոնք նպաստում են երաժշտական արվեստի ամբողջական պատկերացման ձևավորմանը, ապա գիտակցմանը:

Տեսական գիտելիքները /տեմպ, ռիթմ, չափ, նոտա, տևողություն, պաուզա, ուժգնության նշաններ, մեղեդի, տեմբր, լադ և այլն/ բխում են հնչող և կատարվող երաժշտությունից: Դրանք նույնպես խմբավորվում են հանգուցային թեմաների շուրջը: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս երեխաների երաժշտական ընդունակությունների զարգացման ընթացքում խուսափել երաժշտության տեսության ձևական ընկալումից, մեխանիկական սերտումից:

Երաժշտական դաստիարակության արդյունավետությունը և օգտակարությունը պայմանավորված են երաժշտության ուսուցչի մասնագիտական պատրաստվածությամբ ու մանկավարժական վարպետությամբ: Երաժշտության ուսուցչից պահանջվում է դասավանդման որակը բարձրացնել, հասցնել արվեստի մակարդակի: Երաժշտության ուսուցիչը պետք է ստեղծագործական մոտեցում ունենա դասի նկատմամբ, կարողանա ճկուն կերպով կողմնորոշվելով ընտրել մանկավարժական այն հնարները, որոնք առավել նպատակահարմար է օգտագործել տվյալ իրավիճակում: Որպես պարտադիր պայման՝ երաժշտության ուսուցիչը պետք է կարողանա նվագել որևէ նվագարանով՝ դաշնամուր, ջութակ, ակորդեոն, շվի, քանոն, կարողանա երգել, տիրապետի խմբավարական տեխնիկային, իմանա երաժշտության տեսություն և պատմություն, ծանոթ լինի «Երաժշտություն» առարկայի չափորոշչին, ծրագրին և դասավանդման մեթոդիկային:

Դպրոցում երաժշտությունը որպես արվեստի առարկա ինտեգրվում է ոչ միայն դասավանդվող առարկաների, այլ նաև կյանքի և բնության երևույթների հետ: Երաժշտությունը սերտ կապի մեջ է «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների հետ: Երաժշտության և խոսքի համար ռիթմը որոշիչ դեր է կատարում: «Երաժշտություն» առարկայի ծրագրի մեջ շատ են այն երգերը, որոնց խոսքերն ընդգրկված են մայրենի լեզվի և գրականության դասագրքերում:

Երաժշտությունը և մաթեմատիկան նույնպես ինտեգրվում են: Երաժշտության ռիթմի, չափի միավորները, հնչյունների տևողությունները և դրանց զարգացման օրինաչափությունները բնորոշ են թե երաժշտությանը և թե մաթեմատիկային:

Երաժշտությունը և կերպարվեստը, որպես արվեստի տեսակներ, ինտեգրման շատ եզրեր ունեն: Երկու արվեստների արտահայտչամիջոցները՝ գրական տեքստի հետ միասին, ստեղծում են այնպիսի երաժշտական ժանրեր, ինչպիսիք են օպերան, բալետը /բեմական նկարազարդումները, դերակատարների հագուստները և այլն /:

Մեզ շրջապատող աշխարհը գտնվում է ռիթմիկ շարժման մեջ, որը կարծես յուրօրինակ երաժշտություն լինի: Այս իմաստով երաժշտությունը կապվում է նաև երեխաներին շրջապատող կյանքի և բնության երևույթների հետ:

«Երաժշտություն» առարկայի դասավանդման արդյունավետությունը որոշակի կապի մեջ է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հետ: Երաժշտության ուսուցիչը պետք է կարողանա օգտվել համակարգչի լայն հնարավորություններից, երաժշտության դասին, ծրագրային երաժշտական ստեղծագործությունները որոնելու, մշակելու և հնչեցնելու, անհրաժեշտության դեպքում մեղեդի և ռիթմական նվագակցություններ ստեղծելու համար:

Այսօրվա մարդու կյանքում համակարգիչը հույժ կարևոր դեր ու նշանակություն է ստացել: Այն իր ծառայությունն է բերում նաև հանրակրթության ոլորտին: Էլեկտրոնային դասագրքերն ու ուսումնական նյութերն արդեն <<սպառնում>> են հետին պլան մղել նրանց թղթային տարբերակները: Համակարգիչը տեղեկույթի ձեռքբերման ու հաղորդման ամենատարածված և ամենաարդյունավետ միջոցն է դարձել: Այս պարագայում առանձնահատուկ կարևորություն է ստանում սովորողների տեղեկատվական մտահասության (կոմպետենտության) պատշաճ մակարդակի ձևավորման խնդիրը:

Տեղեկատվական մտահասությունը ենթադրում է տեղեկույթի տարբեր աղբյուրների (գրքեր, տեղեկատուներ, հանրագիտարաններ, բառարաններ, քարտեզներ) տեղեկա-տվական սարքերի (հեռուստացույց, մագնիտոֆոն, հեռախոս, ֆաքս, համակարգիչ, տպիչ, մոդեմ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (ձայնագրություն և տեսագրություն, էլեկտրոնային փոստ, ԶԼՄ, համացանց) օգնությամբ անհրաժեշտ տեղեկույթը ընտրելու, մշակելու, պահպանելու և հաղորդելու

կարողություններ: Կարևորվում են ստացված տեղեկույթը քննադատորեն վերլուծելու, գնահատելու, այն տարբեր ձևերով ներկայացնելու և, սեփական գործունեությունը պլանավորելիս ու իրականացնելիս, դրանք առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու կարողությունները: Ուսուցչի խնդիրն է այստեղ համակարգիչը դարձնել սովորողների ուսումնական գործունեության կարևոր միջոց, կրթության ցածր աստիճաններում ապահովել համակարգչային գրագիտության բավարար մակարդակ, իսկ բարձր աստիճաններում ընդլայնել տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունները:

Մեր կրթությունը տառապում է թերությամբ ևս, որն իր բացասական ներդրումը բերելով ուսումնական գործընթացին ստեղծում է, ի վերջո, այն աննախանձելի ուսումնական միջավայրը, որում ո՛չ մի աշակերտ, ո՛չ մի ուսուցիչ իրեն լավ չի զգում: Դա սովորողների տարիքային հոգեբանության չիմացությունն է կամ անտեսումը, ինչն արտահայտվում է ամենուր ուսումնական ծրագրերում, չափորոշիչներում, դասագրքերում, խնդրագրքերում և ուսումնաօժանդակ այլևայլ ձեռնարկներում: Երեխայի հոգեկան ու ֆիզիկական զարգացման օրինաչափությունների, դրանց դրսևորման առանձնահատկությունների մասին ժամանակակից հոգեբանությունը կուտակել է բավական փաստեր, որոնք մանկավարժներն անհրաժեշտաբար պիտի հաշվի առնեն ուսուցման մեթոդներ մշակելիս, ուսուցման պրոցեսի կազմակերպման խնդիրներ լուծելիս: Որոշակիության համար հոգեբանական նվաճումների հարուստ գանձարանից առանձնացնենք մի քանի ղեկավար գաղափարներ:

Երեխան ամենից առաջ զարգացող էակ է և զարգացումն այդ ենթակա է քիչ թե շատ կոշտ օրինաչափությունների: Յուրաքանչյուր տարիքում մարդը հասնում է զարգացման մի միջին մակարդակի, որն հնարավորություն է տալիս նրան յուրացնել-իմաստավորել աշխարհի մասին գիտելիքների ու հասկացությունների մի սահմանափակ ոլորտ: Այն բոլոր գիտելիքները, որոնք գտնվում են այդ ոլորտից դուրս նա չի կարող յուրացնել, սեփականել: Բարդ ուսումնական ծրագրերն ու դասագրքերը այս ղեկավար գաղափարի անտեսման մարդու ֆիզիկական և հոգեկան զարգացման

օրինաչափությունների չիմացության ու չկիրառման արդյունք են: Սրանով է պայմանավորված հանրակրթական դպրոցներում ուսման հանդեպ սովորողների նկատելի անտարբերությունը:

Տարիքային յուրաքանչյուր փուլ բնութագրվում է ոչ միայն իմացական զարգացման որոշակի պոտենցիալ հնարավորություններով, այլ նաև մտածողության տիպով: Այդ տիպի հաշվառումն ուսուցման պրակտիկայում անհրաժեշտ պայման է կրթության յուրաքանչյուր աստիճանում զարգացման բավարար մակարդակ ապահովելու համար: Օրինակ, հանրահայտ է, որ մանկահասակ երեխայի մտածողությունն ակնառու-պատկերավոր (ո՛չ վերացական) բնույթ ունի: Սա նշանակում է, որ այս տարիքի երեխաների ուսուցումն արդյունավետ է եթե այն իրագործվում է պրակտիկ գործունեության միջոցով, որի պայմաններում սովորողը շատ բաներ հասկանում է սեփական փորձով: Համապատասխան դասագրքերն, իրենց հերթին, պետք է հարուստ լինեն նկարազարդման նյութերով, տեքստերը հեղեղված չլինեն սահմանումներով ու բանաձևերով:

Մարդն առհասարակ, երեխաները առավել ևս, հակված են ամեն ինչի մեջ իմաստ տեսնելու: Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք մարդը գիտակցաբար ցանկացել է յուրացնել: Այսինքն, երեխայի համար ուսուցումն արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ ինքն է իր կրթության սուբյեկտը. երբ ինքն է գիտակցաբար դնում կրթական նպատակներ և ազատորեն կազմակերպում իր ուսումնական գործունեությունը դրված նպատակներին հասնելու համար: Այս դեպքում է միայն գիտելիքն անձի համար իմաստ ու արժեք ստանում, դառնում հոգևոր հարստություն: Ուսուցիչները երեխայի զարգացման հոգեբանական մեխանիզմների մասին շատ մշուշոտ պատկերացում ունեն. երեխան ուզում է ակնառու պատկերացնել ուսուցիչը, դասագիրքը նրան տեսություն են մատուցում, երեխան ուզում է պրակտիկ գործունեություն, բնության հետ կենդանի շփում դպրոցը նրան հարկադրում է լռության ու պասիվ հայեցողական վիճակի: Երեխան ուզում է իրեն բռնի մատուցվող գիտելիքների իմաստն հասկանալ, բայց անգամ ուսուցիչը

պատկերացում չունի ինչ նպատակ է հետապնդում տեղեկատվական այս հեղեղը՝ բարդ սահմանումները, անհամար տերմիններն ու հասկացությունները, սովորողների կենսափորձի հետ ոչ մի աղերս չունեցող վերացական դատողություններն ու փաստերը: Երեխան օրեցօր օտարանում է 'ուսումնական' կոչված միջավայրին, չբավարարված բնական պահանջմունքը ձևավորում է կայուն ագրեսիա ուղղված առաջին հերթին ուսուցչին, հետո դպրոցին և ուսմանն ընդհանրապես: Սպառելով աշակերտի հետ ներդաշնակ աշխատելու բոլոր հնարավորությունները դպրոցը որդեգրում է ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ավտորիտար ոճ, և ակամա օգտագործում բոլոր օրինական և անօրինական միջոցները <<չար>> աշակերտներին սսկված պահելու համար: Կոտրում են սովորողի մեջ ամենաթանկը չարին հակառակվելու ոգին, մի որակ, որով միայն, թերևս, մարդը կարող է իսկապես մարդ կոչվել:

Ուսուցումն ու դաստիարակությունը անխզելի միասնություն են կազմում և իմաստալից է խոսել միայն ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման մասին: Սակայն, կրթական պրակտիկայում դաստիարակության և ուսուցման ոլորտները նկատելի չափով տարանջատվում են, ինչը հնարավորություն չի տալիս ապահովելու կրթության ընդհանուր որակի ցանկալի մակարդակ:

«Երաժշտություն» առարկայի ուսումնական հիմնական նպատակները և խնդիրներն են՝

- դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր,
- երեխայի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային երաժշտությունը՝ չբացառելով նաև այլ ժողովուրդների և դասական կոմպոզիտորների ստեղծագործությունները,
- ձևավորել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական հմտությունները,

- զարգացնել երաժշտական ստեղծագործությունների բնույթը, բովանդակությունը, ձևը, կառուցվածքը հասկանալու և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողությունը,
- բացահայտել և զարգացնել սովորողների ստեղծագործական երևակայությունը, նպաստել ինքնաճանաչմանը և ինքնաարտահայտմանը,
- սովորեցնել ընկալել երաժշտության բնույթը, երաժշտական կերպարների զարգացումը և արտահայտել մարմնի շարժումներով,
- արմատավորել մարմնի շարժումներին տիրապետելու, պարային շարժումներ կատարելու կարողություն, ամբողջական պարերի իմացություն:

Եզրակացություն

<<Երաժշտություն>> առարկան ունի ուսուցման ու դաստիարակության իր առանձնահատկությունները, որոնք բխում են դիդակտիկայի ընդհանուր սկզբունք-ներից և կարծես թե լրացնում և անբողջացնում են այն: Երաժշտությունը զգայական արվեստի տեսակ է: Այդ պատճառով երաժշտության ուսուցման և դաստիարա-կության գործընթացում առաջնային են դառնում զգայականից դեպի

գիտակցականին անցնելու սկզբունքը: Այդ սկզբունքից ելնելով է, որ երաժշտության դասերին երաժշտատեսական բոլոր գիտելիքները կապվում են հնչող երաժշտության հետ: Երեխան զբաղվում է երաժշտությամբ՝ երգում, ունկնդրում, կատարում երաժշտառիթմական շարժումներ, պարում, հորինում ու նվագում, որից հետո միայն ստանում համապատասխան երաժշտատեսական գիտելիքներ՝ կապված հնչող երաժշտության արտահայտչական միջոցների, բնույթի ու բովանդակության հետ:

Վերոնշյալ առանձնահատկությունները միաձուլվում են ուսումնական գործունեության ընդհանուր տեսակներին, որի շնորհիվ ամբողջանում է երաժշտության ուսուցման և դաստիարակության գործընթացը: Երաժշտության ուսուցիչը դասի թեմայից, նպատակից ելնելով, կարող է դասի անցկացման համար ընտրել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝ երաժշտության կատարում, երգի և պարային շարժումների ցուցադրում, ուսուցում. ուսումնական նյութի բացատրում. դիտողական պարագաների ցուցադրում, քննարկում. առաջադրանքների ստուգում. նվագարանների օգտագործում. ստեղծագործական աշխատանքների կատարում. երաժշտական խաղերի, մրցույթների, ստուգատեսների անցկացում. իրավիճակների և արդյունքների վերլուծում. բանավոր և գրավոր հարցումների, համակարգչային ծրագրերի օգտագործում. անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

Կրթական ժամանակակից միջավայրի ստեղծման գործում մեծապես կարևորվում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը: Համակարգիչը և թվային մյուս տեխնոլոգիաները զգալիորեն ընդլայնում են ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները, որակական նոր բնույթ են հաղորդում ուսուցման գործընթացին և համարվում են ուսումնառության ժամանակակից գլխավոր գործիքները:

Հանրակրթության պետական չափորոշչով «Արվեստ» ուսումնական բնագավառի շրջանակներում նախատեսված՝ սովորողների գեղարվեստական կրթությունն ու

գեղագիտական դաստիարակությունն ապահովում են «Երաժշտություն» և «Կերպարվեստ» առարկաները: Դրանց հիմնական նպատակն է՝ արվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելու և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն ծավալելու միջոցով բացահայտել ու զարգացնել սովորողների մտավոր ու հոգևոր ներուժը: Արվեստը հասկանալու բանալին առօրեականի և գեղարվեստականի փոխհարաբերության ընկալումն է. սովորողը արվեստի առարկաների դասավանդման ընթացքում իր ստացած գիտելիքների, կարողությունների, հմտությունների շնորհիվ պետք է հասկանա, թե ինչպես է առօրեականը արվեստի միջոցով դառնում կատարյալ, այսինքն՝ գեղարվեստական:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ: Երևան, 1941:

2. Կոմիտաս, Երկերի ժողովածու, երրորդ հատոր: Հայաստան, 1969:

3. Գևորգ Տիգրանյան, Հայ երաժշտական թատրոնի 100 տարին: Հայաստան, 1968

4. Վահե Երկանյան, Հայկական մշակույթ: Երևան, 1982:

5. «Երաժշտություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր: Հաստատված է 2012թ.:

6. Յու. Յուզբաշյան, «Երաժշտությունը 1-4-րդ դասարաններում», Ուսուցչի մեթոդական

ձեռնարկ, «Զանգակ -97», Երևան, 2008թ.:

7. Д. Кабалевский “Основные принципы и методы программы по музыке для общеобразовательной школы”, Москва, “Просвещение”, 2002.

8. 3. Н. Н. Рябенко “Уроки музыки в 1-7 классах”, “Айрис пресс”, Москва, 2006.